

FRIEDRICH NIETZSCHE

WERKE IN 5 BÄNDEN

BAND 1



Aus dem Deutschen übersetzt von
HAKOB MOVSES



Էրեւան

Erewan

«Antares»

ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԵ

ԵՐԿԵՐ 5 ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ 1



*Գերմաներենից թարգմանեց
ՀԱԿՈՔ ՄՈՎՍԵՍԸ*



ՎՃՏԱՊԻՆ

ԵՐԼԱՆ

«ԱՆՏԱՐԻՆ»

**Գրքի հովանավորն է
ԳՈՒՐԳԵՆ ԱՐՍԵՆՅԱՆԸ**

ՖՐԻԳՐԻԽ ՆԻՑՇԵ - ԵՐԿԵՐ 5 ՀԱՏՈՐՈՎ, ՀԱՏՈՐ 1:/-
Եր.: Անտարես, 2018.- 632 էջ:

Ֆր. Նիցշեի (1864-1900) երկերի առաջին հատորն ընդգրկում է «Ողբերգության ծնունդը» (1872), «Անժամանակյա դիտարկումներ»-ի «Կյանքի համար պատմության օգուտի և վնասի մասին» (1874) հոդվածը և հատվածներ «Մարդկային, չափազանց մարդկային» (1878) գրքից:

ISBN 978-9939-76-153-4

© Մովսես Հ., 2018
© Անտարես, 2018

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՆԻՑՇԵՒ ՊԱՏՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ

Արդի պատմագիտությունը բազմաթիվ կերպափոխությունների համապատկերում էր ուրույն տեղն ունի ժամանակի և հիշողության հիմնախնդիրը: Ի հայտ են եկել բազմաթիվ նոր հետազոտական տրամասություններ (*discourse*), որոնք աղերսվում են «պատմական ժամանակ» և «պատմական հիշողություն» հղացքներին (*concept*): Կերպափոխություններ, որոնց ակտիվացումը պայմանավորված է տեսական որոնումներով, որոնք կրկին ու կրկին փորձում են պատասխանել պատմագիտության առջև ծառայած մարտահրավերներին:

Ընդհանուր առմամբ, ժամանակի և հիշողության ողջ եզրաբանությունը բնութագրական է բազմիմաստությունը: Ընդամին՝ հետարդիական (պոստմոդեռն) պատմագիտության համապատկերում այս հղացքները ձեռք են բերել առանցքային նշանակություն, հատկապես որ վերջիններս արդեն դնահատվում են իբրև «ընտրողական և մեկնողական գործընթացներ»:

Արդի պատմագետի համար Ֆրիդրիխ Նիցշեի պատմության հղացքը հետաքրքիր է ոչ միայն յուրօրինակությունամբ, այլև իր բազմաթիվ դիտանկյունների արդիականությունամբ: Ուշագրավ է, որ պատմական ժամանակի հիմնախնդիրը գոյաբանական (օնտոլոգիական), այլ ոչ ճանաչողաբանական (գնոսեոլոգիական) հեռանկարում առաջին անգամ մտածվել-ներկայացվել է Նիցշեի պատմասիրություն ծիրում (իսկ համալիր տեսքով՝

Հավելված

«Կյանքի փիլիսոփայություն»): «Հիշողություն» և «մոռացում» հղացքների փոխհարաբերություն հիմնահարցը, որոշակիորեն կերպափոխվելով XIX դարի վերջին և XX դարասկզբին, Նիցչեի պատմասիրություն մեջ ոչ միայն վերաբժեղվում է, այլև ձեռք բերում ոչ դասական ըմբռնում:

Այդ ամենն ընկալելի դարձնելու համար անհրաժեշտ ենք համարել թեման քննարկել հետևյալ դիտանկյուններով.

- Նախ՝ Նիցչեի պատմասիրությունը դիտարկել ենք իբրև «չրջված» պլատոնականություն: Դա ընկալելի դարձնելու համար մի քանի հիմնական կետերով փորձել ենք տալ «ճանաչողություն» և «Հիշողություն» հղացքների պլատոնական ըմբռնման ուրվագիծը:
- Ապա՝ տվել ենք Նիցչեի ըմբռնումը «Հիշողություն» և «ճանաչողություն» հղացքների լծորդամամբ՝ կարևորելով «մոռացում» հղացքը, որը դադարում է ընկալվել միմիայն գիտելիքների մաքրման դիտանկյունից: Այն է՝ նիցչեական մոռացումը ներկայացրել ենք իբրև պաշար, նորի ընկալման պայման:
- Այս նպատակով հետազոտությունն իրականացրել ենք Նիցչեի առաջարկած «ձննդաբանական» մեթոդով, քանզի այն թույլ է տալիս միմիայնց լծորդել «պատմություն» և «Հիշողություն» հղացքները:

1. Պլատոնն այն իմաստասերներին է, որին Նիցչեն ամենից հաճախ է դիմել Շոպենհաուերից հետո: Ավելին՝ էմբրսոնից հետո երկրորդ իմաստասերը, որի ազդեցությունն ակնհայտ է նրա ստեղծագործության վրա (ավելի մանրամասն տե՛ս Th. Brobjer, *Nietzsche's Wrestling with Plato and Platonism*, in P. Bishop (Ed.), *Nietzsche and Antiquity. His Reaction and Response to the Classical Tradition*, Rochester, NY: Camden House, 2004, p. 241-246): Ուշագրավ է, որ Նիցչեն, թեպետ գտնվելով Պլատոնի ազդեցության ներքո, իր ստեղծագործության արդեն իսկ ելակետում ուրվագծում է

Հավելված

Պլատոնի իմաստասիրությանը հակադրվելու միտումը (տե՛ս *Ibid.*, p. 241): Ավելի ուշ նա իր իմաստասիրությունը կբնորոշի իբրև «չըջված պլատոնականություն».

«Իմ իմաստասիրությունը շրջված պլատոնականություն է (ընդգծ.՝ Նիցշե). որքան հեռու ճշմարիտ կեցությունից, այնքան մաքուր, հիասքանչ և լավ: Կյանքը պատրանքի մեջ իբրև նպատակ» (*F. Nietzsche, Kritische Studienausgabe, Deutscher Taschenbuch Verlag, 1988, Band 7, S. 199*):

Շրջասելով այս թեմայի շուրջ Մ. Հայդեգերի հարցադրումը (այն է՝ «Մենք հարցնում ենք՝ ինչ իմաստով է գեղեցիկության և ճշմարտության՝ պլատոնականությանը հատուկ հարաբերությունը շրջման միջոցով մեկ այլ բան դառնում»): *M. Heidegger, Nietzsche. / Erster Band, Pfullingen: G. Neske Verlag, 1961, S. 231*)՝ փորձենք ստորև պարզաբանել նման «չըջվածության» բնույթն ընդհանրապես պատմության և մասնավորապես հիշողության ըմբռնման համապատկերում: Այլ կերպ ասած՝ ո՞րն է պատմության և հիշողության փոխհարաբերությունների «չըջվածության» էությունը Նիցշեի մոտ՝ Պլատոնի համեմատությամբ:

Նախ՝ նկատենք, որ հիշողությունը, իբրև գիտելիքի և ճանաչողության սուբյեկտ և սուբստանց, հույժ անհրաժեշտ հասկացություն է կեցության մասին Պլատոնի ուսմունքի համար: Ուստի «հիշողության մասին գիտելիքի» և ճանաչողության մասին նրա ուսմունքը ուսմունք է նաև հիշողության և պատմության վերաբերյալ: Այդ առումով արտակարգ հետաքրքիր մի հեռանկար ենք տեսնում նրա «Մենոն» տրամախոսության մեջ, որը շրջադարձային է պլատոնական իմաստասիրության կայացման համար: Ի մասնավորի տրամախոսության կենտրոնական մասում, որտեղ «առաջին անգամ տրված է ճանաչողության պլատոնական բնորոշումն իբրև վերհուշի գործընթաց», որը «պլատոնականության հիմնարար և առավել կայուն ստորոգություններից մեկն է» (*М. Канто-Спербер (отв. ред.), Греческая философия, Т. I, М.: Греко-латинский кабинет Ю. А. Шичалина, 2006, с. 236*):

Հավելված

Ընդհանուր գծերով պատմության համար վերհուշի պլատոնյան տեսությունը հատկապես կարևոր է նրանով, որ այնտեղ առաջին անգամ ձևակերպվել է «ի ծնե իմացության» հղացքը: Ըստ այդմ՝ մինչ իր ներկա մարմնավորումը հոգին արդեն իսկ գիտեր այն ամենը, ինչ պետք է ճանաչի, այն է՝ ճանաչողության որոնումն ու գործողությունը համընդհանուր, հոգու մեջ առկա, բայց նիրհող իմացության արթնացումն են սոսկ: Մյուս կողմից՝ քանի որ բնության երևույթները հարազատ և կապակցված են միմյանց, հոգու՝ իրեն նախկինում հայտնի որևէ ճշմարտության վերհիշումը թույլ է տալիս նրան ճանաչել և ողջ մնացյալը, նրանում թաքնվածը:

Ընդհանուր առմամբ, հիշողություն-վերհուշը հույժ կարևոր է գիտելիքի և ճանաչողության համար, ընդ որում՝ Պլատոնն այն դիտարկում է գրավոր բառի հետ հակադրության համապատկերում: Այլ կերպ ասած՝ Պլատոնի մոտ գործուն է գրավոր բառի՝ իբրև հիշողության փոխարինողի և ներունակ արժեքի իրականացման անդրանցական վտանգի մասին հղացքը, ըստ այդմ՝ դեռ չէր գիտակցվում այն հանգամանքը, որ գիրը և գրությունն ընդարձակում կամ լրացնում են հիշողությունը:

2. Հակառակ Պլատոնի՝ Նիցչեն շեշտադրում է մոռացումը, քանի որ այն օգնում է ապրելուն: Եվ այս համատեքստում Նիցչեի համար կարևորվում է իրականության տեսության ոչ թե գոյաբանական դիտանկյունը, այլ «ծննդաբանությունը»՝ ինչ-որ բարու և ծագումի (genea) ոչ միայն ուղղակի հետաքրքրությունը, այլև նրանում գոյավորում-կայացումը (genomenon) հասկանալու համար: Ծննդաբանության հղացքն այս պարագայում կարևորվում է նրանով, որ այն թույլ է տալիս գոյության անգամ «հոսող» իմաստը որսալ:

Ինչպես դիպուկ նկատել է Օլեգ Արոնսոնը՝

«Ծննդաբանությունը գործ ունի դիմակների, խաղի, թաքչությունների համակարգի հետ՝ հանց աշխարհի անօտարելի հատկության: Այն կարող է թաքուցումների նշանները՝ հայտնված

Հավելված

իրենց անմիջական տրվածություն մեջ, նշաններ, որոնք մենք չենք նկատում, քանի որ «էությունը», լինելով մեր մտածողության արժեքը, իր հետևից տանում է դեպի խորքը, ներսը՝ մղելով հայել անտեսանելու տարածության մեջ: Այդպիսով թաքցնության նշանները ցուցանում են ուժերի բախման գծերը կամ ախտանիշները» (Օ. Արոնսոն, *Игра случайных сил, в книге: Жиль Делез, Ницше и философия*, М.: Ад Маргинем, 2003, с. 11-12):

Բանն այն է, որ յուրաքանչյուր արժեք միշտ էլ «ծննդաբանություն» ունի, որից կախված է ազնվությունը կամ նվաստությունն այն բանի, ինչ նա առաջարկում է մեզ որպես հավատի, զգացմունքի և մտքի առարկաներ: Եվ այս համատեքստում կրկին կարևորվում է «կամք առ իշխանությունը»՝ իբրև ծննդաբանական տարր, որից բխում են իմաստի նշանակությունը և արժեքների արժեքը: Իսկ քանի որ Նիցչեն առաջադրում է նոր պահանջ՝ բարոյական արժեքների քննադատության անհրաժեշտությունը, ինքնին «պատմություն» և «հիշողություն» հղացքները, իբրև արժեքներ, պետք է մեկ անգամ ևս հարցականի տակ դրվեն: Ուշագրավն այստեղ այն է, որ ծննդաբանությունը, որպես իմաստասերի ամբարտավան և խորագույն հայացք, չի հակադրվում պատմությանը, բայց ժխտում է մշակույթի իմաստների վերպատմական ծավալումները: Միավորելով ավանդույթի և անցյալի վրա հենվող մշակույթի նմուշների նկատմամբ պատմական և կառուցվածքային հարաբերությունները և արժեքային նախընտրությունների բազմաձայնության ընդունումը՝ հեղինակը հանգում է «փոխադարձաբար մոռացության չտալու էթիկայի» սկզբունքների բանաձևմանը՝ իբրև «Ես-Ուրիշը» հարաբերության կերպ:

3. Պատմասիրության բնագավառում Նիցչեի պատմության ընկալման նոր հայեցողության մեջ առանձնանում են հատկապես հիմնախնդրի արժեքային և գործնական դիտանկյունները: Սակայն նվազ կարևորություն չունի նաև «պատմական իմաստի» պակասության հիմնախնդիրը, որը նրա «Կյանքի համար

Հակելված

պատմության օգուտի և վնասի մասին» գործի քննարկման թեման է: Այստեղ Նիցշեն պատմության դերի կարևորման փոխարեն իբրև մեկնակետ է վերցնում «պատմական իմաստի» պակասը, իսկ հետո նաև՝ «պատմական գերլիտությունը (Überfluss)»: Այլ կերպ ասած՝ նա իր պատմասիրությունն սկսում է գիտելիքի սահմաններից (տե՛ս M. Marder, *History, Memory, and Forgetting in Nietzsche and Derrida, in Epoché, Volume 9, Issue 1 (Fall 2004), p. 138*):

Սակայն հիմնախնդրի քննարկումն ուզում ենք սկսել Նիցշեի «Զվարթ գիտությունը»-ի 73 - րդ հատվածի քննությունից: Ուշագրավ է, որ հատվածը նիցշեական առակներից է և վերնագրված է «Սուրբ դաժանություն»: Ստորև ներկայացնում ենք առակն ամբողջությամբ.

Սուրբ դաժանություն:— Սրբին մոտեցավ մի մարդ, որը գրկում նորածին մի մանուկ էր պահում: «Խ՞նչ անեմ այս երեխայի հետ, — հարցրեց նա, — նա թշվառ է, այլանդակ և մեջը բավականաչափ կյանք չունի՝ մեռնելու համար»: «Սպանի՛ր նրան, — գոչեց սուրբը սոսկալի ձայնով, — սպանի՛ր նրան և ապա երեք օր ու զիշեր շարունակ պահիր գրկումդ, որպեսզի նրան իբրև հիշողություն կարողանաս պահել. — այդպես դու երեք նորից երեխա չես ծնի (zeugen), քանի դեռ քեզ համար չի հասել վկայելու (zeugen) ժամանակը»: — Լսելով սա՝ մարդը հիասթափված հեռացավ: Իսկ շատերը կշտամբեցին սրբին՝ դաժանություն խորհուրդ տալու համար, զի որ նա խորհուրդ էր տվել սպանել երեխային: Բայց մի՞թե ավելի դաժան չէ՞ նրան թողնել ապրի», — ասաց սուրբը» (Յ. Նիցշե, *Զվարթ գիտությունը*, թրգմ. գերմ., առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մովսեսի, Ե., Վան Արյան, 2005, էջ 105-106):

Առակն առանձնանում է մեզ հուզող հիմնախնդրի շրջանակներում առանցքային նշանակություն ունեցող իր մի քանի արտահայտություններով.

1. նախ՝ «մեջը բավականաչափ կյանք չունի՝ մեռնելու համար» արտահայտությունը,

2. ապա՝ «սպանի՛ր նրան և ապա երեք օր ու գիշեր շարունակ պահիր գրկումդ, որպեսզի նրան իբրև հիշողություն կարողանաս պահել»,
3. և վերջապես՝ «այդպես դու երբեք նորից երեխա չես ծնի (zeugen), քանի դեռ քեզ համար չի հասել վկայելու (zeugen) ժամանակը»:

Ուշագրավն այստեղ այն է, որ վերոթվարկյալ երեք արտահայտությունները հականե-հանվանե համընկնում են պատմության՝ Նիցշեի մշակած երեք հարացույցերին՝ կոթողական (*monumentalische*), հնախուզական (*antiquarische*) և քննադատական (*kritische*) ((F. Nietzsche, *Kritische Studienausgabe, Deutscher Taschenbuch Verlag, 1988, Band 1, S. S. 258*):

Այսպես՝ «Կյանքի համար պատմության օգուտի և վնասի մասին» գործում Նիցշեն, առանձնացնելով պատմության այդ երեք տեսակները, տալիս է դրանց սահմանումները: Չխորանալով այդ մանրամասների մեջ՝ տանք դրանց հիմնական ուրվագծերը:

Այսպես՝ կոթողական պատմության (*monumentalische Historie*) շնորհիվ մարդիկ սովորում են հասկանալ նշանակալի իրադարձությունները, որոնք բախտորոշ ազդեցություն են ունեցել նրանց անցյալի և ներկայի վրա: Ընդ որում՝ կոթողական պատմության ուղեծրում ծավալվող կոթողական հիշողությունը (ինչպես նաև կոթողական ժամանակը) իրադարձությունները գրեթե միշտ չափազանցված և խեղաթյուրված կարող է ամրագրել:

Հնախուզական պատմության (*antiquarische Historie*) դեպքում կարևորվում են անցյալի պահպանումն ու երկրպագումը: Այստեղ հնախուզական հիշողության (և հնախուզական ժամանակի) մեջ առաջնայինն ու երկրորդայինը անտարբերակելի են, իսկ մտահորիզոնը՝ խիստ սահմանափակ: Այս դեպքում ևս առկա է պատմության խեղաթյուրվածությունը:

Քննադատական պատմության (*kritische Historie*) դեպքում գործուն է անցյալի և ներկայի (և անգամ

Հավելված

գալիքի) ծանրութիւննից և զրկանքներից ձերբազատվելու կամքը: Նման հրաժարումը դիտվում է իբրև զարգացման անհրաժեշտ պայման:

Այս առումով ուշագրավ է Նիցշեի հետևյալ ասույթը.

«Ես դա արել եմ»՝ ասում է իմ հիշողութիւնը: Ես դա չէի կարող արած լինել՝ ասում է իմ հպարտութիւնը և մնում է անդրդվելի: Ի վերջո հիշողութիւնը տեղի է տալիս» (Ֆ. Նիցշե, Բարուց և չարից անդին: Չաստվածների միջնադ, Երևան, «Ապոլոն» հրատարակչութիւն, 1992, էջ 60):

Այս ասույթը Նիցշեի ամենահակասական և հարակարծութիւնների տեղիք տված ասույթներից է: Սակայն «հիշողութիւն» և «հպարտութիւն» այդ հակասութիւնը հնարավոր է հասկանալ մասնավորապես «հավերժ վերադարձի» հղացքի համապատկերում, երբ ն ու յ ն ը վերադառնում է տարբերութիւն: Այստեղ հիշողութիւն-գործողութիւնը վերադառնում է հպարտութիւն-վերաբժեւում: Այլ կերպ ասած՝ ի տարբերութիւն կոթողական (*monumentalische*) և հնախուզական (*antiquarische*) պատմութիւն/հիշողութիւնների, որոնց դեպքում, որպես օրենք, ներկան (անգամ գալիքը) տարրալուծվում-հպատակեցվում էր անցյալին, այս դեպքում գործ ունենք ներկայի ազատագրման հետ: Սակայն այս անցում-հրաժարումն այդպես հեշտութիւն տեղի չի ունենում, քանի որ, ըստ Նիցշեի, մենք, իմանալով լավագույնը, ի վիճակի չենք իմացութիւնից անցնելու գործի:

Ընդհանուր առմամբ, առաջին երկուսը դրսևորվում են կամքի բոլորովին այլ ծավալումների համածիրում, քան է երրորդի՝ քննադատականի դեպքում: Այստեղից էլ՝

«Մարդուն մարդու ապագան որպես նրա կամքը, որպես մարդկային կամքից կախված մի բան սովորեցնել և դաստիարակութիւն ու կարգապահութիւն մեծ հանդգնումներ ու ընդհանուր փորձեր նախապատրաստել՝ դրանով իսկ մինչև օրս «պատմութիւն» կոչված անմտութիւն և դիպվածի սարսափելի

Հավելված

տիրապետությունը վերջ դնելու համար՝ «մեծամտություն» անմտությունը նրա լուկ վերջին ձևն է» (նույն տեղում, էջ 91):

Ուստի Նիցչեն առաջադրում է աստիճանակարգման հիմնախնդիրը, քանի որ հենց աստիճանակարգումն է նա համարում «մեր հիմնախնդիրը՝ իբրև ծննդաբանությունից անտարանջատելի մի բան»: Աստիճանակարգումն «սկզբնական (originaire) փաստ է, տարբերության և ծագումի (origine) ինքնությունը» (G. Deleuze, *Nietzsche et la philosophie*, P.: PUF, 1962, p. 9):

Մեկնարկելով վերոգրտարկյալից՝ կարող ենք առանձնացնել հիշողության (և ընդհանրապես՝ պատմության և ժամանակի) փոխլրացական երկու հիմնական ընթացքներ՝

առաջին՝ «կամք առ կործանում»,

երկրորդ՝ «կամք առ իշխանություն»:

Առաջինի մեջ մտնում են քրիստոնեությունն ու պլատոնականությունը (սոկրատեսականությունը): Երկրորդի դեպքում՝ դիոնիսոսյանը (հմտ. Ֆ. Նիցչե, Ողբերգության ծնունդը և այլն, գերմ. թրգմ.՝ Հ. Մովսեսի, Ե., Գրիգոր Տաթևացի, 2013, էջ 120): Այլ կերպ ասած՝ Տիրողի հիշողությունը և Ստրուկի հիշողությունը: Եվ պատմության կամ պատմագետի խնդիրն է տիրողի հիշողությունն ազատագրել ստրուկի հիշողությունից՝ իբրև պատմության բեռից:

Այստեղ կարևոր է մեկ այլ հանգամանք ևս՝ «Առասպելն իբրև հիշողություն» և «Պատմությունն իբրև հիշողություն» արժեքանական զուլգերի հակադրության հիմնախնդիրը:

Առասպելական հիշողությունը կառուցված է անընդհատական կրկնության սկզբունքով, երբ ոչինչ չի փոխվում, աշխարհն ու կյանքն այստեղ տրված են և բացատրվում են վերջնականորեն:

Իսկ պատմական հիշողությունը հենվում է հավերժական վերադարձի սկզբունքի վրա, երբ նույնը վերադառնում է տարբերություններով: Իսկ քանի որ պատմությունը գիտությունն է, այլ արվեստ, ուստի պատմական հիշողությունը գործ ունի արվեստի հետ:

Հավելված

Այստեղ արդեն կարող ենք մոտենալ նիցչեական պատմատեսության կողմերից մեկին՝ «պատմական հիվանդության» բուժման հիմնախնդրին.

«Պատմությունը, քանի որ այն կանգնած է ի ծառայություն կյանքին, ի ծառայություն է կանգնած մի անպատմական իշխանություն և այդ պատճառով երբեք, այս ստորադասությունը, զուտ գիտություն չի կարող դառնալ և չպետք է դառնա, ասենք՝ ինչպես մաթեմատիկան: Սակայն հարցը, թե կյանքն ինչ աստիճանով ընդհանրապես կարիք ունի պատմության ծառայությանը, գերագույն հարցերից և հոգեբերից է որևէ մարդու, ժողովրդի, մշակույթի առողջության առնչությամբ: Քանզի պատմության որոշակի ավելցուկի (Übermass) գեպքում կյանքը ջարդուփշուր է լինում և այլասերվում է, և նրա հետ, ի վերջո, իր հերթին այլասերվում է ինքը՝ պատմությունը» (տե՛ս սույն հրատարակությունը, էջ 317):

Այս ամենից գատ նիցչեն առանձնացնում է պատմության երեք ժամանակային հարթություններ ևս՝ պատմականը (Historisch) – ոչ-պատմականը (Unhistorisch) – վերպատմականը (Überhistorisch): Ըստ նիցչեի՝ ոչ-պատմականը և վերպատմականը կյանքի համար դարման են՝ պատմականության հիվանդությունից բուժող, մինչդեռ պատմականը կյանքի կանգառն է: Կարող ենք ասել, որ պատմականը տանում է դեպի «կամք առ կործանում» այն դեպքում, երբ ոչ-պատմականն ու վերպատմականը տանում են դեպի «կամք առ իշխանություն»: Այսու նիցչեն գիտությունը հակադրում է իմաստասիրությունը, կրոնին ու արվեստին, քանի որ գիտությունը պակասում է գործնականությունն ու բուժականությունը-դարմանումը (տե՛ս (F. Nietzsche, Kritische Studienausgabe, Deutscher Taschenbuch Verlag, 1988, Band 2, S. 699)), այնինչ իմաստասիրության, կրոնի և արվեստի հոգածությունը հենց բուժականություն-դարմանումն է (ibid. S. 698):

Իսկ պատմության վերակազմակերպման հղացքում ուշագրավ է ոչ միայն ներկայի ազատագրումը կամ վերակարևորում-

Հավելված

վերարժևորումը, այլև անցյալի մեջ ուրիշների ներմուծման հիմնախնդիրը. «Այն ժամանակ, երբ խոսքի մեջ թափանցել տվեցին ուրիշները, այն ուժը, որը նախադասությունների բոլոր ատոմները նորոպի է դասավորում, ստիպում է ընտրել բառերը և մտքերը նորոպի է գունավորում ու դարձնում ավելի մթին, ավելի օտար, ավելի հեռավոր», միևնույն ժամանակ «ուրիշները հարկադրանք է. այն տրվելու, ճայնակցելու անհաղթահարելի հաճույք է ծնում» (Ֆ. Նիցշե, Զվարթ գիտություններ, թրգմ. գերմ., առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Մովսեսի, Ե., Վան Արյան, 2005. էջ 115): Հնարավոր է երբևէ հիշողությունը ևս ուրիշմավորել: Հարկավ՛, և ոչ այլ կերպ, քան մոռացությունը: Եվ դա կարող են լուրջ նրանք, ովքեր թոթափել են ժամանակի և հիշողության բեռը, այն է՝ միայն ազատ մտքերը, քանի որ՝

«Նրանց «ճանաչումը» արարում է, նրանց արարումն օրենքների սահմանում է, նրանց առ ճշմարտություն կամքը՝ առ իշխանություն կամք է» (Ֆ. Նիցշե, Բարուց և չարից անդին: Չաստվածների միջնադր, թրգմ. գերմ.: Հ. Մովսեսի, Երևան, «Ապոլլոն» հրատարակչություն, 1992, էջ 104):

Վերոշարադրյալը ի մի բերելով՝ փաստենք, որ Նիցշեի պատմասիրական հայեցակարգը ևս բխում է «կամք առ իշխանություն» հղացքից: Մանավանդ որ Նիցշեի տեսության համաձայն՝ գիտելիքն ինքնին «կամք առ իշխանություն» է, ուստի պատմության, ժամանակի և հիշողության մասին նիցշեական հայեցակարգը ևս պետք է բխեցվի այդ հայեցակարգից:

Սակայն ինչպես ամենայն շրջում, այդպես էլ Նիցշեի շրջված պլատոնականությունն ի վերջո իրազործվում է վերադարձի տեսքով, առ պլատոնականություն վերադարձի՝ «անհրաժեշտաբար գամված մնալով նրա էություն մեջ, ինչին դեմ է գնում» (Մ. Հայդեգգեր): Այլ կերպ ասած՝ «հիշողություն-մոռացում» հակադրության մեջ նախ տեսնում ենք մոռացման շեշտադրումը, ապա՝ նման հակադրությունների իսպառ ոչնչացումը և մոռացման հաստատումն ինքնին «հիշողության հետքի»

Հավելված

Կառույցի մեջ: Մոռացումը չի տրվում իմաստավորման, այլ ուղղված է երկխոսության, իմաստների հանդիպելուն: Եվ այդ ամենը՝ «հավերժական վերադարձի» համապատկերում, որտեղ «Նմանը նույնի աստիճանը չէ, այլ նույնից լիովին տարբեր մի բան» (Ֆ. Նիցշե):

ՍՄԲԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՍՎԱՍՅԱՆ. ԻՆՉՊԵՕՍ ԵՆ ԱՍՏՎԱԾ ԴԱՌՆՈՒՄ	5
<i>ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈԳՈՒՑ</i>	<i>131</i>
<i>ԱՆԺԱՄԱՆԱԿՅԱ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ. ՀՈԴՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ.</i>	
<i>ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԳՈՒՏԻ ԵՎ ՎՆԱՍԻ ՄԱՍԻՆ</i>	<i>301</i>
<i>ՄԱՐԴԿԱՅԻՆ, ՉԱՓԱԶԱՆՑ ՄԱՐԴԿԱՅԻՆ (ՀԱՏՎԱԾՆԵՐ)</i>	<i>407</i>
<i>Առաջին հատոր</i>	<i>407</i>
<i>Երկրորդ հատոր</i>	<i>480</i>
<i>1. Խառը կարծիքներ և ասույթներ</i>	<i>481</i>
<i>2. Թափառականը և նրա սուվերը</i>	<i>497</i>
<i>ՀԱՎԵԼՎԱԾ</i>	<i>525</i>
<i>Վ. յաչ. Իվանով. Տառապող աստծու հեղինական կրոնը</i>	<i>527</i>
<i>Ջ. Կոլի. Ողբերգության ծնունդը</i>	<i>533</i>
<i>Պ. Սլոտերգայկ. Մտածողը բեմում</i>	<i>538</i>
<i>Ս. Հովհաննիսյան. Հիշողության հիմնախնդիրը Նիցշեի պատմասիրության ծիրում</i>	<i>556</i>
<i>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i>	<i>569</i>

ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԵ

ԵՐԿԵՐ 5 ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ 1



FRIEDRICH NIETZSCHE

WERKE IN 5 BÄNDEN

BAND 1



Գերմաներենից թարգմանեց

ՀԱԿՈՒ ՄՈՎՍԵՍԸ

Aus dem Deutschen übersetzt von

HAKOB MOVSES

Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Էջազրուածը և կազմը՝ Լևոն Ալեքսանյանի



Անտարես

«Անտարես» Հրատարակչատուն
ՀՀ, Երևան 0009, Մաշտոցի պ. 50ա/1

Հեռ.՝ (+374 10) 58 10 59

Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 58 76 69

antares@antares.am

www.antares.am